թախծութեան հետ: Ոչինչ մխիթարական չկար, ոչինչ չէր զօրացնում բեկոած սրտերը: Ամէն ոք մի խուլ անբացատրելի տագնապի մէջ էր գտնուում: Կարծես օդի մէջ շարժւում էր մի դիւական շունչ, որ բոլորի վրայ սարսափ էր ազդում:

Մի բան սպասւում էր:

Գիշերները մարդիկ տանից դուրս չէին գալիս: Ցերեկը շինականները խումբերով էին գնում իրանց դաշտային մշակութիւնները անելու: Անասունները գիւղերից շատ հեռու չէին քշում արածացնելու համար: Աղքատը դժգոհ էր, որ ոչինչ չունի, հարուստը դժգոհ էր, թէ ինչպէ՞ս պահէ ունեցածը: Ճանապարհները դատարկոել էին, քարաւանների երթեւեկութիւն չկար: Լեռների մէջ ամէն քար, ամէն ժայռ աւազակ էր դարձել: Անցնելու հնար չկար:

Ինքը բնութիւնը զայրացել էր. պատժում էր մարդիկներին: Երեք տարի շարունակ երաշտութիւնից յետոյ սկսոեցաւ կատաղի սովը: Քուրդերը իրանց երեխաներին ածել էին բազարներում եւ անցնողներին ասում էին. «տարէք, պահեցէ՛ք, ձեզ ծառայ եւ ստրուկ դարձրէք, միայն հաց ուտացրէք, որ չմեռնենէ: Շունը, կատուն արժէք ունէր, բայց մարդկանց որդիները արժէք չունէին: Փողոցները ծածկոած էին նոաղած, գունատոած սովալլուկներով:

Ամէն կողմից վատ լուրեր էին լսւում:

Մուշ քաղաքի մէջ սովատանջները յարձակոել էին արքունի հացի ամբարների վրայ եւ բոլորը յափշտակել էին: Վանի մէջ հրդեհել էին հազարից աւելի խանութներ եւ վաճառքները կողոպտել էին: Այն գիշերը հեռու տեղերից եկած գիւղացիներ քաղաքի պարիսպների մօտ բեռնաւորում էին իրանց գրաստները յափշտակած կողոպուտով: Արտոս լեռան ստորոտներում, իւր չադրի մէջ, մի անյայտ չարագործ սպանել էր Նեհրիի նշանաւոր շէյխին: Մի քանի գողեր մտել էին Վանի Հայոց առաջնորդի քնարանը,ե, դանակի ծայրը նրա կուրծքի վրայ դնելով, սրբազանին բաց անել էին տոել ոսկիների սնդուկը: Վանի ծովակի վրայ երեւացել էին ջրային աւազակների նաւակներ: Շատախի գայմադամի կնոջը,երկու երեխաների հետ մի ուխտատեղից վերադառնալու միջոցին, բռնել, տարել լեռների մէջ պահել էին, հազար ոսկի փրկանք էին պահանջում բաց թողնելու համար: Կառավարութիւնը տագնապի մէջ էր. նա, ինչպէս այլ խօսքով ասում են, գլուխը կորցրել էր, չգիտէր ինչպէ՞ս առնել չարիքի առաջը: Մինչեւ մի տեղ յայտնոած անկարգութիւնը խաղաղեցնում էր, նրա փոխարէն, ուրիշ տեղերում, յայտնւում էին աւելի վատթար անկարգութիւններ: Բաղէշում մի կին օր-ցերեկով մտել